

— էջ 54 տ 36 աստուածական կամօք
— « — » 37 զի զոգորմութեան տնան-
կացն փոխ տայ Աստուծոյ

(Շարունակելի)

աստուածական կամօք
զի ոգորմութիւն տնանկացն փոխ տայ
է Աստուծոյ

Ե. Ե. Դ.

ՆՇԱՐԲ ՆԱԽԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՈՅ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾԻ ՎԱՍՆ ՆԿԿՈՄԴԻՈՅ ԲԱՂԱՔԻՆ

Քաղցկեութիւնն⁽¹⁾ ընդ ցանկութեան: Մանկութիւնն որ քաղցկեալ է կենաւք, եւ ծերութիւնն որ յազկեալ է կենաւք: Միտ-
թարութիւնն եւ սուգք երեւին ի միջոյ ծե-
րոցն եւ տղայոցն: Դառն է սուգ տղայոցն,
զի ո՛չ ելից զչափ կենաց իւրոց: Մեծ է
միտթարութիւնն վասն նորա, զի ո՛չ ելից
զպատար մեղաց իւրոց: Ունա՛յն է չափ
իւր ի կենաց, ունա՛յն է պատար իւր ի
պարտեալ: Զրկեցա՛ւ ի կենաց, ե... պ...
աց⁽²⁾: Դառն է որ յառնէ ընդ աճմէ, ո՛չ
պահանջէ զնա ստուգութիւն: Եթէ Ետուր
վաստակա եւ պահանջես վարձս, [ո՛չ] պա-
հանջէն ի ստուգութենէն: Առնուլ կեանս
ընդ կենաց իւրոց: Տայ նմա կեանս ստու-
գութիւնն, . . . ⁽³⁾ նմա երանութիւն . . . ս
. . . : Հատուցանէ ստուգութիւնն ընդ զըր-
կելոյն զնա, ե զեղո՛ւն զչափ նորա չնորհ-
քն: Մերոյն թեպէտ եւ չէ չար սուգն,
դա՛ռն եւս է քան զտղայոցն: Զի լի է չափ
իւր ի կենաց, ե լի՛ է պատար իւր ի պար-
տեալ: Չափն կենաց իւրոց թափեցաւ,
պահեալ կայ չափ մեղաց իւրոց: Յաստի
կենացս հեռացաւ, ի հանդերձեալ տան-
ջանսն մերձեցաւ: Դա՛ռն է սուգ տրդա-
յոցն, իմաստ իւր առ ծերո՛յն է: Անհա՛ն-
ճար է սուգ ծերոյն, քննութեամբ առ տր-
դայոցն է: Չախողակի՛ տեսանեմք զսուգ
ծերոյն եւ տղայոյ յորժամ եկեացեն ուղ-
ղակիք: Ուղղորդ⁽⁴⁾ տեսանէ ամենայն

ոք, որպէս զի ձախողակիքն չըջեցին աստ
զտեալ մեր: Քաղաքն լի ազատ կանամք,
ահա հոտեալ լցեալ է զիտկամք: Մեռա՛ւ
ծեր հարիւրեմեան, ընդ տղայոյ քառաւ-
րէի: Ի մէջ երկուց այսր չափոց, ամենայն
տիք եւ չափք լուծեալ են: Ո՛ր որ հեռիդ
ես ի ծերութենէ, մի՛ կարծեր թէ հեռի ի-
ցէ մահ: Զի վերին աւրէնազիրն ո՛չ երբեք
ընդ աւրինաւք. կամե՛լն նմա միայն է աւր-
հաս: Ուր կամի երկայնէ՛ւ եւ կարճէ, Մե-
րոյն եթէ երկայնեացէ, մանուկ է: Ման-
կանն եթէ կարճեացէ ծեր է: Բարկութեամբ
վարէ զբազումս: Ոգորմութեամբ վարէ
զսակաւս: Ուր կամի զի կարգեացէ, ծերք
երթան նախ քան զտղայս: Ուր կամի զի
չփոթեացէ, տղայք երթան յառաջ քան
զծերս: Ուր կամի ապականել, զամենայն
տիտ վարէ զաւագան իւր: Ընտրութեամբ
առնէ զամենայն, ե յաւգո՛ւտ գործէ զա-
մենայն: Ոգորմած է ի հարկանելն, ե զը-
թած է ի կեցուցանելն: Է ուժ բարկու-
թեամբ աւգնէ, աւգնութիւնս որ ծած-
կեալ են ի մէջ: Բայց ո՛չ թաքչին
իւր, զի բուրէ՛ հոտ աւգ-
նութեանց նորա, զի յամենայն կողմանց աւգ-
տութիւն է: Դաւաղան բարկութեան նորա
աւգտութիւն է: Գութ սիրոյ նորա աւգնութիւն
է⁽¹⁾: Երանի՛ որ կարաց ե ոչ տրբանջեաց
զստուգութենէ նորա: Զի՛ք տրտունջ եւ
քրթմնջիւն, վասն որոյ արար եւ առնէ:
Ո՛չ եթէ առ չարութեան առնէ, թէ տըր-

(1) Բառս այս չիք ի բառագիրս:

(2) Եղծեալ, հազիւ ընթեռնի եւ սպառեալ:

(3) Եղծեալ եւ անընթեռնի:

(4) Այսպէս յորինակին:

(1) «Դաւաղան . . . է» այս տառն բառ յա-
ւելեալ են յաղղչին ի լուսանցս:

տրնջեցէ՛ր զնմանէ բերան: Ոչ եթէ վնասել առնէ, որպէս զի տրտնջեցէ լեզու: Ո՛չ անիրաւի հարկանէ. Զիք որ եպերէ զդորմութիւնս նորա, զի բա՛րձր է յեպերանաց, քանզի բարձր է ի չարութենէ: Ոչ հասանէ ի նա հայհոյութիւն, զի բա՛րձր է ի բամբասանաց: Եթէ զլսացին լեզուք մեր, լեզուքն զուարթնոց զոհանան: Բարձր է ի հայհոյութենէ, և ո՛չ կարաւ փառաւորութեան: Լնութիւն է որ յինքեան, ո՛չ յաւելու և ոչ պակասի: Եթէ արհնութիւնս մեծ առնէ զնա, կարէ՛ հայհոյութիւն փոքր առնել զնա: Ոչ զնա մեծ առնէ արհնութիւն, մեր բերանքս մեծանա՛ն յայնմանէ: Ոչ հասանէ առ նա հայհոյութիւն, զի առ հայհոյի՛չն կրկնի անդրէն: Կարծեցուցանէ, թէ մեծանայցէ արհնելովն, զի արհնեցուք և մեծացուք: Կարծեցուցանէ թէ տրտմի յանաւրինկն մեր, զի մի՛ անաւրինեացուք և կեցցուք: Է ուր հարկանէ զչարս, զի ըզբարբան զգուշացուցէ՛ր: Եւ է ուր հարկանէ զարդարս, զի արկցէ ա՛հ անաւրինաց: Զի եթէ ասէ արդարքն տանջեցան, ո՛ւր թարխցեն անաւրէնք: Որ կայն եթէ հարկանի, բնդոտանո՛ւն նովաւ անկեալք և յառնեն: Հարկանէ զայն որ կայն, զի յարուցէ՛ նովաւ զկործանեալս: Հարկանէ և զանկեալս, զի մի՛ անկցի այն որ կայն: Աւրհնա՛ւ է բարին որ աւգնէ երկոցունց կողմանց միմեամբք: Յերկոցունց աւրէն է՝ մեզ սաստել սակաւ յարձն: Աւրէն է մեզ սաստել ի նա, զի եղիցի սահման ազանութեան իւրոյ: Հասցուք փոքր մի ի բերանոյ, և տացուք քաղցեալ բերանոց: Մեզ զրգանք և փափկութիւնք, և աղքատաց վշտամբութիւն(¹): Խոնդեն(²) յազք առանց չափոց, իսկ քաղցեալք և ո՛չ չափով: Իրբեւ զառաջին հալեցաք, ա՛յլ խորտիկ հասուցանի: Զի երկորի զինին չեւ եւս է թափեալ, և ա՛յլ սկսեալ է ի պարզ արկանել: Ոստայն զոստայնահա՛ն(³) ըստիպէ, և զառաջինսն ցե՛ցս հարկանէ: Աղքատք մե՛րկ են ի հրապարակս, և ցեց ջեռուցա՛ւ յասրղ: Ունայն է որովայն կարաւելոց, և պատառէ՛ր քսակս մամոնայ:

Երաշտացեալ է մարմին աշրոյ, և հոտեալ է եւզ յամանս: Դառայ հասարակաց թէ լուրցես, տեառնն հասարակաց նմանեցիս: Որ նմանէ կերակրչին ամենայնի, հոգաբարձո՛ւ է նա հասարակաց: Կարէ՛ր բարերարն որ ետ քեզ, տա՛լ ընկերին քում որպէս քեզ: Զքեզ մեծացոյց, զի իրբեւ զնա՛ լիցիս տուող ծառայից նորա: Զարն նախանձի ընդ քեզ, զի գուցէ լիցիս բարի՛ հակառակ նմա: Զի մի լիցիս հակառակ նմա, հակառակ անձին քո արար զքեզ: Մարդ որ ունիցի ակն չար, պատկե՛ր է նա ծածուկ չարին: Որ նմանող լինի Աստուծոյ, մեծանայ քան զմարդկութիւն: Նախանձի չարն ընդ մարդկութիւն քո, զի մի՛ նմանեցէ Աստուածութեանն: Մինչեւ ի գրախար անդ Աստուածութիւն խոստանայր քեզ: Ուր ոչն էր աւրէն լինել, խոստանայր զի լիցիս Աստուած: Ուր պատշաճս է և աւրէն լինել, աստան կեցուցանէ: Զի զգո՛յշ լիցիս երկոքումք: Իրբեւ զչար մեղանչէ, և վնասէ՛ ձրի: Զբարձրութիւն որ յԱստուծոյ է, սերմանէ՛ ի մէջ մեծատանց: Զողորմածութիւն Աստուծոյ, հալածէ՛ ի միջոյ նոցա: Բարձրութեան բարձու նմանեցին, ի քաղցրութենէ նորա աւտարացան: Նմանեցէ՛ք անմիտք միովն, յաւելէ՛ք նմանէք միւսովն: Որով չէր նմա աւրէն նմանեցէք, և յորմէ աւրէնն էր հեռացարո՛ւք: Յետս ընդգէ՛մ էք իրբեւ զչարն, որ յերկոսին յետս ընդգէ՛մ է: Ո՞ ոչ երկիցէ ի համբաւոց: Ո՞ ոչ զողացի ի տեսլենէ: Համբաւք հեռաւորք զամանք են: Պարտիք մատաւորք սաստիկք են: Խրատիչն քանզի ողորմած է, առաքեաց զհամբաւն ընդ դաւազանի: Եթէ խրատեացէ զմեզ համբաւն, ահա ապրեցաք ի դաւազանէն: Եթէ անփոյթ որասցուք ի համբաւէն, ո՛չ անցանէ ի մէնջ դաւազանն: Որ զհամբաւսն ստուշանէ, ընդոստուցանէ(¹)

(¹) Վշտամբութիւն = վշտամբեութիւն:

(²) Նոր բառ մի, որ չգտանի ի բառգիրքս:

(³) Նոր բառ:

(¹) Յօրինակին նախ զրեալ էր՝ ստուգանէ, զոր ուղղին ուղղէ աշուէս՝ ստուգանէ, բնդաստուգանէ:

զնա յանկարծ գտաւհանն: Եւ նոքա որ կորեանն յանկարծ, զհամբաւս եւ զպայպայս⁽¹⁾ ստուեղանեցին: Լուան զգաւաաց եթէ ապականեցան, եւ զքաղաքաց եթէ կործանեցան: Լուան համբաւս եւ արհամարհեցին, մինչ զի հայթիաց հայթումն մեծ: Քաղաքն մայր թաղաւորաց, եղև մայր հեղձուցելոց: Որ մտանէր ի քաղաքն, ի տո՛ւնս թաղաւորութեան մըտանէր: Ի նո՛ր զժողս մտանէ, որ մտանէ ի նա աշմ: Մի՛ ծուլասցուք իրբեւ զհեռաւորս, զի մա՛ւա է բարկութիւն յամենայն տեղիս: Երկերուք ի համբաւէն զոր լուաք, զի մի՛ լիցի զործն յաշխարհիս մեբում: Ապաշխարութիւն կարէ կանել ընդդէմ, զի մի՛ զիմեացէ: Ազաւթք կարեն ցանդել զաւելոյն ընդ որ ընթանայ բարկութիւն: Ուր եւ կարգացել ապաշխարութիւն, լսէ՛ նմա ամենալուրն: Քաղաքն քաղաք թաղաւորութեան, եղև քո՛յր Սողոմա[յ]: Ձի բնակեալ էին թաղաւորք ի սենեակս նորս, բնակեալ են աղուէսք ի փոսս նորս: Քաղաքն տիկին ընկերաց իւրոց, եղև յարհաւիրս ընկերաց իւրոց: Ոչ կարէր ճանապարհորդ ժող ունել շմտանել ի նա: Ձահի՛ հարկանի աշմ տեւող հայել ի նա աշաւք իւրովք: Յամաք լի էր փափկութեամբ, եւ ծով լի՛ էր զրզանաւք: Յամաք կայր առաջի նորս, իրբեւ զպաշտաւնեա[յ] ամենայն վայելովք: Մով կայր ի թիկանց նորս: Պաշտեցին զնա ծով եւ ցամաք: Ընդ ծով եւ ընդ ցամաք կործանեալ է: Լացին զընա ծով եւ ցամաք: Մի՛ յուսասցի ոք ի շնորհս եւ ծուղասցի՛ յապաշխարութենէ: Եթէ կործանեաց զքաղաք այն, բարի եւ սո՛ւյզ էր նա: Դոյր անդ իւր⁽²⁾ ողորմութիւն, եւ ամփոփեաց զնա ընդ բարկութեամբն: Էին նորս անդ եւ շնորհք, եւ ամփոփեաց զնոսս ընդ ստուգութեամբն: Ամփոփեաց թաքոյց զստուգութիւնս իւր յարդարս: Մերկաց եհան զսուրն սալասուր: Մերկացաւ սուր սուսերին, եւ ամփոփեացաւ ողորմութիւն: Կոտորեաց բարկութեամբ սուսերն: Չոզան արդարք ընդ մեղաւորս: Վի՛ մահու որսացաւ զամենայն ոք, արու եւ էգ զամե-

նայն ոք ուր եւ⁽¹⁾ էին: Եհաւ բմբունեաց զշինուածն, մեռան զնայուեք ի հրապարակս, եւ ի մէջ տանց նըստակաւնք: Եմուտ արնդուխտ բնակեաց յանկարծ յ[ը]նդարծակ տեղւոջ առանց վորձուց: Ձիք որ հանէ զնա անտի, բայց եթէ բարբա՛ւ յարութեան: Դրացիք որ միշտ կային առանց կազոյ, բնակեցան ի զժողս: Էր զի զընեաց երկիր, եմուտ եւ եղև ի նմա սատաւումն իւր: Ձի սպասէր ուտել ի նմանէ, եկէ՛ր զնա զի զարծաւ ի հոգ: Մեռան այզորդք յայգիս⁽²⁾ իւրեանց, եւ պարտիպանք ի պարտէզս իւրեանց: Ընդոստուցին զնոսս արհաւիրք, եւ մեռան ի շարժմանէ բազումք: Կթեաց բարկութիւն յանկարծակի չկուխս եւ զկթոզս նոցա: Թահնիշն անէժ զերկիր, տեւեցաւ եղև յարհաւիրս: Ձաղաղակ⁽³⁾ այնքան բազմամբոխ, լոցոյց բարկութիւն յանկարծակի: Մատեաւ առ արարիշն խաւսուն, զարձեալ Լոյէ զնա ի յարութեանն, եւ ըստանաւ[յ] հոգն զգարգս իւր: Խաղաղեաց բանդ զկապեալսն, եւրձ զնա բարկութիւն անհապ: Ձի ի վաղէ արգելեալ էին անդ, եւ ոչ դատեցան զընոսս զատաւորք: Էջ զատաւորն զատաւորաց, արա՛ր զգատս նոցա ի միում ժամու: Էր զի մինչդեռ կազէին ընդ միմեանս, կտրեալց մահ զկազս նոցա: Էր⁽⁴⁾ զի մինչդեռ սուրս տայր, էր զի դեռ քոքս⁽⁵⁾ ժողովէր: Էր զի յիւրմէ տայր այգում, եւ էր զի զ[ը]նկերաց յափշտակէր: Չոզաւ անաւելնն մինչդեռ անաւելնէր: Չոզաւ արդարն մինչդեռ արդարանայր: Էր զի մինչդեռ հիմն արկանէր, անկաւ առաջին զոր շինեաց: Էր, զի շինեաց, զարդարեաց եւ կազմեաց, եւ եղև նմա տուն իւր զժոխք: Էր ուր աշխատէր ի մանկութեան զնել համբարս ծերութեան, ազատեաց զնա մահ յանկարծակի ի հոգոց իրբեւ զճառայ: Էր որ դաւաւրն խորհէր, եւ էր որ ընդ երկարոյ՛ հոգայր: Առ բե-

(1) Եւ ի վերայ տողին յաւելեալ յուղղէն:

(2) Նախ զրեալ յայգիս, զոր ուղղին ուղղէ յայգիս:

(3) Օրինակն ունէր նախ զաղաղ, յոր յաւելու ուղղին՝ աղի:

(4) Էր յաւելեալ ի վերայ տողին զընա արբարդին:

(5) Իմաստ բառիս ինձ անյայտ:

(1) Նոր բառ, ինձ անյայտ իմաստիս:

(2) Իւր ի վերայ տողին յաւելեալ յուղղէն:

բուն կարկեալս, կուտեալ⁽¹⁾ համբարն զոր համբարեաց ազահութիւնն: Էր որ զգինիս պահէր, եւ էր որ զարդիւնս հնացուցանէր: Արմտիք մեծագորտութեան⁽²⁾, առ նմին կուտեալ էին ի դժոխս: Էր որ արդիւոյր հաց ի քաղցելոց, եւ ընդ նմին թաղեցաւ ի բազնակ⁽³⁾ իւր: Էր որ իրբեւ ուղղեաց զսեղանն, կարկեցաւ բերան իւր ի⁽⁴⁾ խորտրկացն: Փոխատուն եւ փոխառուն, ի մեծ հոգւս մաշէին: Հոգ որ հեղձոյց գրազումս, հեղձոյց զնա բարկութիւնս: Էր զի մինչդեռ կշռէր զարծաթն, չ'է կենդանւոյն ի դժոխս: Էր զի մինչդեռ երգումն տայր, չոգաւ երգումնն ի բերան իւր: Զոգաւ պահողն ի պահս իւր, եւ կերողն յորկորտութեան: Զոգաւ պոռնիկն ի պղծութեան իւրում, եւ սուրբն ի սրբութեան իւրում: Մեռաւն դատաւորք ի տան առննի, մինչ էին կաշառք ի ձեռս իւրեանց: Մեռաւն յանկարծ կազք նոցա, մինչ էին զոգութիւնք ի ծոցս նոցա: Զոգաւն հարսունք առապատաւք, եւ ցածուն կանայք սենեկաւք: Էր որ ի վերայ խորոյն նստէր, եւ էր որ⁽⁵⁾ ի վերայ ամղաց⁽⁶⁾: Մին տարաւ զընդ իւր ործս չարս, եւ միւսն, եւս պաշար բարի: Հանդերձեալ է ստոյգըն որոշէլ զվաստակս եւ զգործս նոցա: Զի գիտութեան ամենագիտին, չէ՛ մարթի եթէ մոռացի ինչ: Մինչ կենդանին եւ խառն էին, ո՛չ մոռացան նմա զործք նոցա: Եւ մինչ մեռեալ եւ շփոթեալ են, ոչ մոռանան նմա ընթացք նոցա:

Չshr⁽⁷⁾ ներսու Սրբաւոր անձն
եւ սիկհրակաւն վարդապետ,
ստացաւդ սաստաճեալ⁽⁸⁾ մասեկիս
յիշեալի՛ք ի Քրիստոս⁽⁹⁾ եւ նոյն ինքն
ձեզ ողորմեացի. անկէն —

Նախա ԶԻՆՏԷՐԻՔ Յ. ՄՈՒՐԱՏ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵՆՈՐՀԱՆՈՐԱՆԱՆ ՀԵՌԱՅԻՐ

Ս. Դեռզայ Տօնին առիւ Ամեն. Ս. Պատրիարք հայր վարաց հեռագրով շնորհատել Ամենայն Հայոց Վեմ. Հայրապետ Տ. Տ. Գեղար Ս. Կաթողիկոսին առնել, եւ Ն. Ս. Օծափնը բարեմանցաւ հեռագրով պատասխանել Ս. Պատրիարք Հօր հեռագրին, որոնց պատկերներ կ'արձանագրենք.

1927 Սպտ. 23, Երուսաղէմ

Ն. Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Էջմիածին

Հանելքէ Զեր տեղաւոն տօնին առիւ բնդունիլ միւր տեղեկոյ շնորհատութիւնները. երկար կեանք եւ յաջողութիւններ կը մաղթենք Զեր Վեապատարեան:

ՊԱՏՐԻԱՐԷ ԳՈՐԻՆԱՆ

1927 Սպտ. 27, Էջմիածին

ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ԳՈՐԻՆԱՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ
Երուսաղէմ

Անկեղծ շնորհակալութիւններ եւ օրհնութիւններ:

ԳԵՂՈՒԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ ՅԵՇԱՍԱԿԸ

Ժառանգաւորաց վարժարանի Բարերար Տիար Պատրիկ Կիւլաշնկեանի քաղձանքին համեմատ իր ողբացեալ եղբոր Կիւլապիի եւ սրբոյն Սերովբէի յիշատակին տարեկան Ս. Պատարագ եւ Հոգեմանդրատեան պաշտօն կը կատարուի վարդապետի առնին Սրբոյ Յակոբեանց Տաճարին մէջ:

Ըստ Ս. Աթոռի աւանդական սովորութեան վարդապետին պատարագին է Ս. Պատրիարք Հայրը. Ն. Ամեն. Սրբազնութեան առաջնութեան փափկութեան պատճառաւ, այս տարի պատարագին եղաւ Պատրիարքական փոխանորդ Դեր. Միքայիլ Եպս. Աղաւունի, որ իր բարոյին մէջ դրուածն Կիւլաշնկեան քաղձանքին իւր եւ ջերմ մաղթանքներ ըրաւ Բարերար Պատրիկ Կիւլաշնկեանի քաղձութեան համար, եւ օրհնեց ողբացեալ Կիւլապիի եւ Սերովբէի յիշատակը: Ժառանգաւորաց վարժարանի աշակերտք եւ Ընծայարանի սարկաւազունք, եւ հաւատաւեալներէն շատեր Ս. Հաղորդութիւն առին, եւ պատարագի աւարտումէն ետքը Հոգեմանդրատեան պաշտօն կատարուեցաւ Կիւլաշնկեան զերդատանի ննջեցեկոց յիշատակին:

Իսկ երեկոյն Մայրավանքիս սեղանատան մէջ բոլոր Միարեւոյթեան եւ Ժառանգաւորաց վարժարանի աշակերտներուն հոգեհաց արուեցաւ, աղօթք-

(1) Յեռնագոյն ոմն զրիշ յաւելու աստէն էր:

(2) Բառս այս չի՛ր ի բառգիրս:

(3) Նոր ինչ բառ.

(4) Ի յաւելեալ յուղղէն:

(5) որ յաւելեալ ի յուսանք ի բուն իսկ զրիշն:

(6) Նոր եւ ինծ անծանօթ բառ:

(7, 8, 9) Տէր, աստուածեան, Քրիստոս եւ

այլ բառեր բնագրին մէջ սղոյւած են պատիւով. իսկ այս նշանաւորութեան մէջ լուսն դաւած են այլպիսի սղոյւմներ: